



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 34

ՀԱՐԱՐԱԹ

21 ԱՊՐԻԼ 1907

Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ	ԳԱԽԱՌԱՅ ՀԱՄԱՐ	ԱՐՏԱՍՏՀՄԱՆԻ
Տարեկան 50 ՂԸ	Տարեկան 54 ՂԸ	Տարեկան 42 Ֆր.
Վեցամսեայ 25 »	Վեցամսեայ 27 »	Վեցամսեայ 6 »

Զ Ե Ն Ի Թ

Իր ամէն մասանց մէջ կատարելապէս խնամուած միակ ժամացոյցը զոր կարելի ըլլայ յանձնարարել և երաշխաւորել այն բացարձակ ճշտութեան համար՝ որ իր յատկանիշն է :

ՄԵՍ ՄՐՑԱՆԱԿ ԲԱՐԻՉ 1900.

ԱՐՏԱԳՈՑ ՄՐՑՄԱՆ ՄԻԼԱՆ 1906,

Հանդերձ ժիւղի անդամակցութեամբ.

Թուրքիոյ և բովանդակ Արեւելքի համար միակ ներկայացուցիչը

Գ. ՍԱՐԳԻՍՕՑ Ե Ի ԸՆԿ

Մեծ մթերանոց ամէն տեսակ ժամացոյցներու, չղթաներու և գոհարեղէններու :

Կ. Պոլիս, Պաղչե-գաբու, Օոզգի-Պաֆ (Էօւկր-եֆէկէի) վանառասան դիմաց Թիւ 16,


ԱՐՏՈՆԱՏԷՐ — ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

(T. آصاوریان) شرکت صتییه مطبعه — باب عالی جاده سنده نو ص ۵۷

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍՍՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պաղչե-Ալի հասցեայի Թիւ 52

Հատոր 40 փարսա



Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի,
[Վիսնգամայն մեքենաներ
կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը տունը կտրի մեքենայի մնայ,
բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ
մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ, մինչդեռ զէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
եւ տաղտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Է Ռ

ՀԱՅԵՐԱՅԹԻԷ ԿԱՅԸ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կտտարեւ լաւործուածը,
հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախսին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՇԱՐԲԱԹԱԿԱՆ
ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒՄՆԵՐ

- | | | |
|---------------|---|--|
| ԲԵՐԱ | (| 1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին . |
| | (| 2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ . |
| ԿԱԼԱԹԱ | (| 1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը . |
| | (| 2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ . |
| ՊՈԼԻՍ | (| 1. Սուլթան համամ . |
| | (| 2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 . |
| ՍԿԻՏԱՐ | | Զարչը Պօյու, թիւ 120 . |

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնաձեւեր գաւառներու բոլոր ֆաղսներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 եւ
343 կրկին, Տիւղօղլուի տունը:




ՏՆՕՐԷՆ-ԻՄԲԱԳԻՐ — ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

ԺԱ. ՏԱՐԻ ԹԻԻ 34

ՋԱՏԻԿԻ ԹԻԻ

21 ԱՊՐԷԼ 1907



ԱԶՆ. ԹՈՎՄԱՍ ԷՄԷՆՏԻ ԹԵՐԶԵԱՆ

ՄԵԾԱՆՈՒՆ ԻՄԱՍՏԱՍԷՐ ԲԱԶԱՍԵՂԾ

Թ. ԹԵՐԶԵԱՆ

Երկար ուսումնասիրութիւն մը պէտք է՝ լիովին ու ճշգրիտ պարզելու համար գրական-մատենագրական-կրթական գեղեցիկ աւագարէզը զոր կատարած է մեր մէջ այն անձը որուն անունը խորագիր դրինք այս հակիրճ աղբերուն:

Անոր երկարատեւ գործունէութիւնը որ կամաւոր ընդհատուածով մը միջակիտուած է (վասն զի շատ դժուար պիտի ըլլար վերջակիսուած բառը գործածել), անոր երեւումը մեր հորիզոնին վրայ վաթսուական թուականներէն պէտք է սկսի, թէեւ ուսանողական շրջաններէն ալ՝ առաջին ցուքերը պսպրդուն ու նշուագեղ արշալոյսի մը Ազրիականի այն հմայիչ ծովախորշին շող տալ սկըսած են՝ իտալական ջինջ երկինքին ու Ս. Դազարու հովանիին ներքեւ:

Իր վերագարձէն հաշուելով՝ այդ աշխոյժ ու ծիծղուն թուականը կը սկզբնաւորի՝ այն օրերէն ուր Գրեկանութիւնը նոր պիշուածով մը կը ծլարձակուէր, Թաթարներ իր ոգեւորութեան է՛ն եռանդուն թափին մէջ էր ու Դաստիարակութիւնը նոր խանդի մի տարակալ կ'ըլլար: Մտքի ժրութեան շրջան մը ծայր կուտար որուն կը բերէին իրենց մասնակցութիւնը՝ Թէրզեաններ, Աճէմեաններ և իրենց գործակից ու գաղափարակից ազնիւ հոգիներ՝ մեր կրթասէր ու լուսամիտ վեհապետին Օգոստոսիան հովանիին ներքեւ: Թէրզեան, ուրեմն, մէկը եղաւ անոնցմէ որոնք այդ հովանաւորութեամբ զօրացած՝ թէ՛ պետական և թէ՛ մասնաւոր վարժարաններու մէջ սկսան ու կը շարունակեն արեւմտորի լուսաւորութեան յստակ նշոյլները ցոլացնել: Թուրք, Հայ, և ուրիշ ամէն ուղղէ հպատակ Օսմանցիներու համար եթէ իրենց անունը այնքան սիրելի եղաւ, պատճառն այն է որ իրենց պարկեշտ ու հուստարիմ գործունէութիւնը, իրենց կրթիչի ազնիւ դերը արգիւնաւոր եղաւ, և՛ բազում այն է՝ որ այդ արգիւնաւորութիւնը արժանացաւ նաեւ Սուլթանի վեհապետին ալ Բարձր գնահատումին, և իրենց կուրծքը պատճառնշաններով ալ զարդարուեցան:

Հոս՝ տեղը չէ զուգակշիռ ընել և ի վեր հանել մասնաւորապէս Թէրզեանի գրական գործունէութիւնը, բայց կարելի է անցողակի յիշել Հայ Լեզուն ու Գրականութեան իր մասուցած ծառայութիւնները, իրիւր Ուսուցիչ Գեղեցիկ Դպրութեանց և Գեղադիտութեան (ճիւղ սրուն մէջ եղական կոչումով մը նշանաւոր եղաւ և զոր ընդարձակ ուսումնասիրութեան ալ աւարկայ ըրաւ Ս. Դազարու Հանդիսաւանին մէջ):

Բարոյիկ ու շինիչ ուղղութեամբ մը նոր սերունդը դաստիարակելու ցանկացող, 1878-79ին հրատարակեց Իրական Վարժարանի մը Ուսմանց Յատկագիրը որուն նշանաբանն է Mon scholae sed vitae discendum (=Ո՛չ դրացի՛ ալ կեանց հրահանգիլ) և զոր ուրիշ առթիւ մասնաւոր դատումի ենթարկել կ'արժէ, ցոյց տալու համար Թէրզեանին դաստիարակական ըմբռնումը՝ սա բանաձեւին տակ. Դաստիարակութիւնը գիտութեանց ամէնէն խորինն է, եւ արհեստից դժուարագոյնը:

Ու իր քնարին սրտայայտ լարերը ինչ գողարիկ քերթուածներ հնչեցուցին և ինչքան սիրատարի սիրտեր խանդոտեցին՝ հազներգելով Սէրն ու Քնարը, Կինն ու Գինին, Վարդն ու Մանուկը, Ծիծառն ու Ծիծաղը, Ինքն է որ հելլեն բնագրէն ի հայ վերածելով Անակրեոնը՝ սա Ուղերձով կ'ընծայէ իր Քնարին սիրահար բարեկամին:

« Անբաւաւ ծաղկաւք »

« Զոր Անակրեոն »

« Խրնամոս մասաւք »

« Արնոյց յնէկոն , »

« Փունջ կապեալ պեպեա՛ »

« Զօնեմ աւաղիկ »

« Մսերմաց եւ Քեզ »

« Սիրոյ հաւաստիք » : Եւ այլն :

Հակիրճ ըլլանք, սովաշն, իր բազմապիսի արժանիքներու գրուածութիւն մէջ ու բաւականանա՛նք այս գողարիկ գրուագով իր քերթողական տաղանդին, չյուզելու համար իր անդորրիկ սիրտը և չվիրաւորելու համար իր համեստութիւնը որ մէկն է իր հոգիին չքնաղ զարդերէն:

ՍՄԲԱՏ ԴԱԻԹԵԱՆ



10 Ապրիլ 1907, Երեւոյի, առաւօտեան ժամը 2 ին, Սկիւսարի
Ա. Խաչ Տաճարին մէջ իր սաներէն պատրաստուած մահաբեմը՝ Յաւէս
ողբացեալ Մեծանուն Ուսուցչապետին՝ Ռ. Յ. Պերպէրեանի որուն վրայ
Թեոդիկ կարդաց իր արձայոյզ եւ անկեղծ դամբանականը որ անն ։

են բոլոր, մենք սաներդ ենք բոլոր: Դո՛ւն չամբեցիր անոնց իմացական սնունդ, Դո՛ւն անոնց հրամցուցիր հոգեմորոգ ճաշեր համադամ: Դո՛ւն զանոնք մեծցուցիր, Պատույ ծխո՛ւն վրայ հեծցուցիր: Դո՛ւն զանոնք պատուասեցիր, պատրասեցիր, բարի՛ իրենց նմաններուն հանդէպ, եւ արի՛՛ Գեանքի կրկէսին մէջ ոգորելու գօտեպինդ . . .

ՄԵՐ կ'երթաս: Համայնքը պէ՛տք ունի Քեզի, հայրեր պա՛րտք ունին Քեզի. իրենց խորին երախտիքը՝ վաշխով բաշխուած՝ պա՛րտք ունին քեզի: Դո՛ւն՝ սերունդներու դաստիարակ, Դո՛ւն՝ նկարագիրներու պինդ կազմաւորիչ: Դո՛ւն՝ անհաշտ անկուպար տախտակներու վարպետ ճախարակիչ, Դո՛ւն՝ հին ու նոր մանկութեան անխոնջ ղեկավար . . .

ՄԵՐ կ'երթաս: Հոգեբանի զննողութեամբդ չե՛ս անդրադառնար սա սիրտերուն՝ որ կը կոտորան հիմայ կսկիծէ, չե՛ս նայիր աչքերուն՝ որ կ'այրին հիմայ արցունքէ, ու չե՛ս ունկնդրեր ցաւազին հեկեկաքներ՝ որ կուրծքերէ կը քակուին . . .

Մոռ՛ւ ձգեցիր ինչ որ քուկինդ էր. — Ետի՛դ՝ Ուսուցչութեան նախաձեռնող պերճափառ, զոգո՛ր՝ Ուսմանց փառոյթը մանկման, ծնւթդ՝ Դասաւանդութեան լծակը վերամբարձ, աչքդ՝ Պատականութեանդ վրայ անքնիթ, ուշդ՝ Քեզի՛ յանձնուած, Քեզի՛ վստահուած մատաղեւամ Հօտին բոլորքը դեգերուն, ու մասներո՛ւդ մէջը, ու շուրթերո՛ւդ շուրջը շարունակ՝ Դիրքին փառքը եւ հմայքը Գրիչին . . .

ՄԵՐ կ'երթաս: Դո՛ւն — աննախընթաց բեմասաց՝ — Պրոֆեսորսն էիր ամէնուն, կենդանի Անդրին Պերճախօտութեան, հոս ճառելով, հոն բանախօսելով, այլուր հաղելով, շուրթերէդ ու գրիչէդ հոսելով իմաստութեան խօսքերը դաշնալուր: Խօսէ՛, « Էֆէնտի » , ծախ մը, ճի՛կ մը հանէ դամբանէդ . . .

Ա՛խ, ինչ որ Քուկի՛նդ էր, տարիներու երկար ու փորձագէտ ամբարումով՝ ինչ որ իւրացումդ էր տիրական, ինչ որ, վերջապէս, Գանկի՛նդ էր ու Սիրսինդ, ինչպէ՛ս կուտայիր, եւ, անխնայ կուտայիր, աննախանձ կուտայիր, յորդառա՛ս կուտայիր՝ մանչեւուդ որոնք զաւառներէն, արուարձաններէն կուգային, որոնք իրենց ծնողքն ու սիրելիները ձգելով կուգային Տուն-Դպրոցդ, զՔե՛զ ունենայու հոգեւոր ծնողք: Հարուստի տղուն, աղքատի զաւկին ու բախտէն անժառանգ հէք որդուկին անխտիր կուտայիր Հոգեւոր թանգարանէն, Միտքիդ զանժառանգէն, ուրիշ կերպ ունեւորներ խպնեցունելով աստիճան . . .

Մանկութիւն մը լիման՝ Հմտութեանդ լեցունկ Ստինքէն կախուած՝ այդ անխարդախ կա՛թը ճանչցաւ: Ծրծեց, մարտեց, յաղեցաւ կենսառոյգ, ու մեկնեցաւ նորերուն տեղ տալու Ու նորե՛րը եկան, նոր, աղածրի մանկութիւնը փութաց իր գայի ի գայի գնացքով՝ Քեզմէ՛ նոյնը ըմբռնելու, ո՛վ պատուական Մատուակ . . .

Դպրոցդ Մայր-Փեռնակն էր՝ որուն խորհրդաւոր բջիջներուն մէջ իրենց մե՛ղրը շինեցին քով քովի, եղբայրովի, ծաղկասիրիկ մեղուները խուռներամ, ցորեկին՝ Դասարաններուդ յուռնի անդասանները ստանդական, ուսումնասնի Պատէզկիդ ծաղկանոցները թափառիկ, ասղին բզզալէն, անդին՝ բաժակներու բեղմաւոր փողին շորթելէն . . .

Ամէնո՛ւն հսկեցիր, ամէնո՛ւն հասար, հայրենի կտուրիդ տակ խմբուողներուն՝ խանդաղասանքդ ու գուրգուրանքդ ու միտքիդ պաշա՛րը բաժնեցիր բաշխեցիր սիրալիր, եւ ո՛չ ոք անհաղորդ հանեցիր՝ երբ Լոյսի յորդաբորբ վառարանդ տարին ամբողջ կը նշուէր անդադար: Տաքցան անոնք ու խայացին, Տունէդ դուրս ու Տունէդ ներս՝ Աշխատանքը եւ կեանքի փառքը երգեցին . . .

Ինչպէ՛ս ուսուցիր անոնց. — Քու անմեղի կատարելութեանդ քո՛ւն գաղտնիքն էր առիկա, բուն Արուեստդ էր առիկա: Մարգեցիր, տղաքը անվե՛րջ մարգեցիր: Դո՛ւն՝ Հայ Ուսուցչութիւնը իր « պատուելի » ութեան ինկած իմաստէն վե՛ր առի, վասն զի սորվելով, միշտ սորվելով էր սորվեցուցիր: Ուսուցի՛ր մանաւանդ այն երեեակ վարդապետութիւնը որ՝ առջի՛ մէկ օրէն՝ կեանքիդ նշանաբանն էիր ըրած. — Ճանչնալ ու պաշտել ինչ որ Գեղեցիկն էր ու բա՛րձր Գեղեցիկը, ինչ որ Բարին էր ու բա՛րձր Բարին, եւ ինչ որ ձշմարիտն էր ու բա՛րձր ձշմարիտը . . .

Այս մտախալար երրորդութեան խմորովը շաղուրւած՝ ասեցիր եւ ասե՛լ տուիր Տգեղը, Չարէն նողկացիր ու նողկա՛լ տուիր, եւ վտարեցիր ու վտարե՛լ տուիր մեր հոգիներէն դուրս՝ ամէն ինչ որ սուտ էր ու կեղծիք . . .

Չըբիր բան մը, բա՛ն մը, չունեցա՛ր ընծացք մը՝ որուն համար ետքէն զղջայիր: Անունդ շուշան մնաց ու Համբաւդ՝ բիրտը . . . Ճամբան՝ ուրկէ քալեցիր կեանքիդ ամբողջ շրջանին, — հակառակ իր եկբաններուն եւ առապարին զառկներներուն, — ուղիդ ու հեշտաւէտ կամուրջ մը դա՛մաւ ոտքերուդ տակ, Քեզի՛ մի՛շտ երջանկութիւն, դէպ ի խղճի խաղաղութիւն առաջնորդդ . . .

Իսկ երբ երջանկութիւնդ ամպոտեցաւ, միւս կէսիդ ապամահ կորստեամբը հոգիդ երբ միազնեցաւ, տաղապետեցաւ, ցաւդ կո՛ւլ տուիր, եւ, Պատականութեանդ նուիրական մատուցէն կենդանացած՝ իսկոյն Գործի՛դ դարձուցիր աշուիդ, վասն զի կորով կար Քու մէջդ, եւ, պողպատէ՛ կամրի մը կորովը, ո՛վ մեծամուն Մազիստոս . . .

Անոնք որ Բու մեծութիւնը չի տարին, անոնք որ Բու մասուցած կրթ. Թանկագին ծառայութիւններու վրայ դիտարկելով թող ձգած՝ վերջերս բնութիւններէն զԲեզ ու խեղճ նայեցան կրթ. ու գր. աշխատիւն մէջ փայլող Բու մեծ Հուշակիւ, այսօր խղճմանքնուն լրկանքն ունին՝ անշուշտ իրենց բաժին, երբ եկար անս հասնարիդ ամբողջ վեմութիւնը մէկէնիմէկ տախտակէ տա ցործի՛ր հուրին մէջ նստեցունել . . .

Բայց Դուն, ո՛վ մեծ Մարդ, մեր միտքերուն մէջը, մեր սիրտերուն խորը Բու յատուկ խորշը ունիս, Իսկական Դոյն, Դոյններէն Ասանա, Ասանայէն Պաղեսին, ամէն ո՛ւր որ ծնունատուն տաներդ ցրուած են, Պէրպէրեանութիւնը պիտի կրկնեն անդադար . . .

Հո՛ս պիտի պահենք Բեզի, հո՛ս պիտի Թաղենք Բեզի, մեր ներսիղին Թաքթաբուր, Գրիչիդ հետ՝ որ երբե՛ք չը ծամարտակեց, ճակտիդ սրտիկէն հետ՝ որ միշտ բաց ու ցերմակ մնաց, ու Բերնի՛դ հետ՝ որ գիտցաւ ողորդախոհութեան եւ վեր գգացումներու Թարգմանը հանդիսանալ . . .


Միմէ երէկն էիր Դուն, այսօ՛րն ալ ես, ու վա՛ղն ալ պիտի ըլլաս Համբաւիդ ամբա՛ւ պերճութեամբը, ցորչալի դպրոց ու դպրութիւն, զիրքեր ու գրականութիւն կենդանի մնան . . . Խուսկերուն հոտերովը, ծաղիկներուն բոյրերովը, դպիրներուն պատգամիկ ծայրերովը Բու-կին ծամբաղ կ'առնես հիմայ, Մահը ողջունած անյայտ ինչպէս պիտի ողջունէր երկրագործը՝ ծեռքը բարձր մաքին, կամ, նաւապետը՝ ընկղմող շոգենաւին վերնայարկը, — պարտականութեանդ ու պաշտօնիդ զլուխը անսասման կեցած . . .

Հուսեղէն Պատկը՝ որ ցակտի շուրջը, որ անունիդ շուրջը աղեղ-ուած է լայնալիւր, չէ, չէ՛ ընտ ու այս ծաղկեայ զաղփաղիւն պատկերէն, Դուն՝ Բու անմահութիւնը Յորեկանիդ օրը ո՛ղջ ո՛ղջ ողջունեցիր արդէն, տարիներ տուա՛յ, ծախերու եւ ցնծութիւններու մէջ . . .

Երեսնամեկի հոյակա՛ւ Դպրոցիդ ու Բուկին « Գեղեցիկ Դպրութեան » դ իբր յիշատակ, Թո՛ղ որ սա տղը կրկնեմ հիմայ՝ մեր ուսանողի երգերէն .

Քեզ փա՛նֆ, ո՛վ Դպրոց . . .

Եւ Թող ասիկա՛ Անոր ամունը պանծացունողիդ՝ ամենամերձին « Հուսկ-Բանք » ն ըլլայ, ո՛վ բազմերախս Ուսուցչապետ, ո՛վ սիրական Հայրիկիս



ԹԵՈԴԻԿ

ՊԵՐՊԵՐԵԱՆ

Ե Ի

ԳԵՂԵՑԻԿ ՍԵՌԸ

Անակնկալ մահերու իրերայաջորդութեամբ, լուսաւորութեան կենդանի ջահերու յանկարծական չիջումովն էր որ ողջունեցինք 1907 տարին՝ զոր ժողովրդական բարբառով պէտք էինք կոչել « նահանջ » :

Ամանորէն ցայսօր, սա քանի մը ամսուան մէջ, Դրիգոր Խանէն սկսեալ մինչեւ Պէրպէրեան, միտքով ու սրտով զարգացած, արժանաւոր համբաւի տէր չքնաղ անհատներ, միսի ու ոսկորի ախուր կոյտի մը պէս չորս կանգուն կտաւի մէջ պլլած՝ փոսին յանձնեցինք, առ յաւէտ բաժնուելով իրենցմէ :

Այն օրէն ի վեր որ — անհաւատալի, զարհուրելի իրականութիւն՝ որուն հաւա-

տալը չի դար մարդուս — Պէրպէրեանի մարմինը՝ մահուան անողոք ճիւղաներուն մէջ սնդուած ու ճղմուած՝ երախտապարտ սաներու ձեռքով՝ դուրգուրանօք հողին յանձնուեցաւ՝ Քէչեան, Դամէր, Մէնէվիչեան, Եէլքէնճեան, Վ. Փափաղեան, Ենովք Արմէն և դեռ ուրիշներ իրենց ամէնէն սրտառուչ ու արցունքոտ տողերը նուիրեցին ողբացեալին յիշատակին՝ որ վառ պիտի մնայ միշտ մեր ամէնուս ալ սրտին մէջ :

« Ձե՛, Դուն չե՛ս բաժնուած մեզմէ » ըսելով միսիթարւողներ կան : Երանի՛ այդպէս խորհողներուն : Տխուր ու բիրտ իրականութիւնը չի կրցայ վանել դեռ միտքէս : Ան՝ մեր համայնքին զարդը, մեր համայնքը լուսաւորող ջահն էր, մարեցաւ այդ ջահը. մեր վերելք սաւառնող իմացականութեան գեղեցիկ անգղը Թոաւ դնաց այլեւս, ու հիմայ, շատ բարձրերէն՝ շատ վերերէն՝ լուսեղէն կէտի մը պէս իր փայլը կը ցուցնէ միայն,

և կամ անշոշափելի ցուքի մը պէս կ'անցնի մեր աչքերուն առջեւէն, իր հետ քաշելով սանելով մեր հիացումը, մեր հառաչը:

Պէրպէրեան անունը, հմտութեան, ուսման ու յառաջդիմութեան իբր հոմանիշ բառ մը կը հնչէ արդարեւ մեր ականջներուն:

Իրմով անած միտքի մարդը, ճշմարտին ընդունակ, բարւոյն հպատակ, ու գեղեցկին գիտակ, կարծես տարբեր դրոշմ մը ունի զարգացելոյ ակումբին մէջ:

Մտաւորական կեանքի, հանճարի ու տաղանդի կայծ մը, ճառագայթ մըն էր Պէրպէրեան՝ որ իր մահուանը թուի ամպովը չի պիտի ծածկուի երբէք:

Իր դազաղին շուրջը հաւաքուող համակիրներ, երբ վերջին յարգանք մը տալու ըղձանքէն աւելի, եկած էին՝ անգամ մը եւս հաստատելու համար այս աշխարհի ունայնութիւնը, և տեսնելու համար թէ ինչպէ՞ս պիտի սղմի փոսի մը անցուկ սահմաններուն մէջ՝ այդ հանճարեղ փիլիսոփոսը, այդ լոյսը, այդ ճառագայթը ...:

* * *

Մեծանուն Հանգուցեալին վայել ծանր կշռոյթով մը՝ դաշն ու մեղանուագ երգեցողութիւնները սկսած էին արդէն: Մենք, էրեկամարդիկս բոլոր՝ կսկիծի, ցաւի ծանրութեան տակ արձանացած, գլխահակ ու սըրտարեկ, խօսք մը, բառ մը իսկ թոթովելու անկարող, գամուած մնացած էինք մեր կեցած տեղը, մինչդեռ վերնատան մէջ կիներ, անտարբեր ու անդգայ, կը շաղակրատէին աղմկայոյլ՝ առա՛նց քաշուելու — չ'ըսեմ առա՛նց ամչնալու — վարի էրեկամարդիկներէն՝ որոնք, առանց բացառութեան, ակռայ կճռտացնելու աստիճան զայրացած էին անոնց հանդէպ:

Արարողութիւններու ու աղօթքներու դադարներուն՝ տիրող խորհրդաւոր ու վեհ լռութիւնը կը խաթարէր կանանց մտերմական խօսակցութեան, վիճաբանութեան, մշտութեան աղկազկ ու ողորմուկ աղմուկովը:

Ներկաներուն մէջէն օտար դաւանութեան պատկանող մէկը՝ որ առջի մէկ վայրկեանէն սրանդամ կերպարանքով մը դէպի աղմուկի վայրը ուղղած էր իր խոփող նայուածքը,

չի կրցաւ համբերել, ու յօնքերը պոռտած, ձեռքի յանդիմանական շարժումով մը զգացնել ուզեց՝ թէ պէտք է լռեն, մինչդեռ անոնք հեռու էին այնքան, որքան էր իրենց բուն արժէքը այն կարծեցեալ արժէքէն՝ զոր ուրբացեալն Պէրպէրեան, որտի անորակելի ազնուութեամբ մը կ'ուզէր վերագրել իրենց:

Սիրուած մարդու մը ցաւն իսկ սիրելի ու խնկելի է միանգամայն:

Նողկանքով ու զայրոյթով համակուեցան մեր հոգիներն ամբողջ, ու մենք ի գուր կը փորձէինք անխռով ու անկաշկանդ ըմբոյխնել սիրեցեալ Պէրպէրեանի մահուան դաւնութիւնը, վիշտն ու ցաւը:

Պէրպէրեան, Գեղեցկին սիրահար, համակ հոգի, հրեշտակի սրտով ու սուրբի մը կեանքով ապրած այդ Անձը, կրցած էր կանանց աշխարհին մէջէն իրեն պէս մը ընտրել իրեն կենակից՝ որ կը խտացնէր իր վրայ սրտի, հոգիի ու նկարագրի գերագոյն գեղեցկութիւն մը:

Իր կինը՝ իր դիտակէտը եղած էր, ուրկէ ինք՝ կը նայէր կանացի աշխարհին, ու զայն գեղեցկին ու բարւոյն մարմնացումը կը նկատէր:

Իր հոմոլոգներուն մէջ խաբուած էր, բայց գէթ իր խաբուած ըլլալու դիտակցութիւնը չ'ունեցաւ:

Կը յիշեմ, անգամ մը, ժամերով ամէն ճիգ թափեց՝ դարձի բերելու համար կանանց մասին յոռետես եղող իր մէկ ամուրի սանը, ու վերջերս «Ամենուն Տարեցոյցը»-ին մէջ կանանց մասին՝ մասամբ արտասպառած իմ մէկ ուսումնասիրութեանս առիթով, իր պերճախօս տրամաբանութեամբ ու յորդ փաստերով, յորդորել փորձեց զիս որպէս զի այդքան յոռետես չ'ըլլամ կանանց մասին:

Մե՛ղք այդ համոզումին, մե՛ղք այդ յարգանքին, մե՛ղք այդ պաշտումին, որու արժանի չ'ըլլալին իր դազաղին առջեւ իսկ յայտնեցին կիները՝ բուն իսկ իրենց ընթացքով:

Անոնք իրեն անձանթներ մնացել էին, ու անձանթին հրապոյրն էր որ ողորդած էր Պէրպէրեանի ազնիւ ու անբիծ հոգին: Կիներ՝, ձեզի՛ կ'ըսեմ. եթէ Պէրպէրեան իր դազաղին մէջ իմանար այդ ամէնը, դուք կենդա-

նի ու կարկառուն հերքումները սիրտի ըլլա-
յիք՝ ձեր մասին՝ իր ունեցած հաւատքին,
ու իր տուած յորդորներն ու խորհուրդները
— նա իրական գոհարներ ինչ համար — ա՛լ
չի պիտի սանձէին խիղճս, ամէն անգամ որ
աննպաստ կարծիք մը յայտնէի կանանց մա-
սին:

Այսպէս, անցեալ Երեքշաբթի առաւտան
վերնատունի աղմուկներն ու խօսուքաւորը
անգամ մըն ալ չեղանցին՝ մեզի ծանօթ այն
մտածումը՝ թէ այդ կիները ներքին վրդ-
ժումէ մը զուրկ՝ եկեր խմբուեր էին հո՛ն լո՛կ
բազմութիւն և հանդիսութիւն գիտելու,
հաւաքուեալ հետաքրքրութիւններն գոհացնելու
անտեղիտալի հարկէն մըլեալ:

Ի դէպ չէ՛ կրկնել հաս, — հակառակ նիւթիս
սխրականութեան, — ժողովուրդէն փոխ
առնուած այն գեղեցիկ առածը՝ որուն՝ Ար-
պիւրի «Թանգարան» ին մէջը հանդիպեցայ,
եթէ չեմ սխալիր:

Երկինք հաւսնիք կայ, քսին.
Կանայք սանդուխ մը բերին
Պեպի ամպերը դրին,
Որ դեմքը տեսնեն հաւսին ...:

Հարմիր կամ մեռել, այնչափ բարակը
չին փնտեր կիները, հերիք է որ հանդի-
սաւոր ըլլայ՝ իրենց ճշգրտաւն ներկայու-
թիւնը ի հանգէս ածելու համար:

ՍԱՐԳԻՍ Ս. ՍԱՐԳՍԵԱՆ

ԱՐԵՒԵԼՔ

Օրաթերթ Ազգային, գրական և քաղա-
քական: — Բաժանորդագրութիւն՝ տարե-
կան՝ Կ. Պոլսոյ համար 80 դրշ. գաւառնե-
րու համար 108 դրշ. և օտար երկիրներու
համար 35 ֆր.: Հասցէ՝ Ղալաթիա, Քաման-
աս փողոց: ԱՐԵՒԵԼՔ հրապարակ կ'ելլէ ա-
մէն օր, կէս օրին, խնամեալ բովանդակու-
թեամբ, ընտիր յօդուածներով, թարմ լու-
րերով ու նորագոյն տեղեկութիւններով:

ԱՌԱՅ ՄԱՐՍԷՅԸ ԵՐԹԱԼՈՒ

Քրիստոնեայնները թէ՛ էրեկմարդիկ և թէ՛
կանայք, երբ Երուսաղէմ կ'երթան, ընդհան-
րապէս հաճի կ'ըլլան, ի բաց առեալ այն կի-
ները՝ որոնք անարատ պահել կուզեն իրենց...
սեփօթին: Հայերն ալ երբ Սաղիմական հողին
վրայ (այս բացատրութիւնը պարզապէս Այ-
վաղեանի հաճոյք պատճառելու համար է)
այո՛, երբ Սաղիմական հողին վրայ ոտք կը
դնեն՝ երկու մասի կը բաժնուին. աշխարհա-
բարեանները և գրաքարեանները. առաջին-
ները հաճի կ'ըլլան և վերջինները մահճեսի:

Արեւելքի քրիստոնեայնները երբ Մարսէյ
կերթան, կամ բան մը չեն ըլլար և կամ բը-
ժիշկ կ'ըլլան, կամ վաճառական կ'ըլլան,
կամ սեղանաւոր, կամ pickpocket, առթիւթ
կամ բռնակիր:

Մինակ Պոլսեցի հայերն են որ երբ Մար-
սէյ կ'երթան, ամէնքն ալ առանց բացառու-
թեան գրագէտ կը կարին, չոգենաւը Եէնի-
գարուի բայէն անցած վայրկեանէն մինչեւ
Ժօ իէթէն ներս մանելը:

Ասիկայ պարզապէս հիւանդութիւն մըն
է որ Սիրքէճիէն կ'սկսի և Քանդակէս կը
վերջանայ:

Որքան որ խելքս կը հասնի, սա՛նկ, մի-
ջին հաշուով քսան տարի կայ որ հայերէն
թերթ կը կարդամ, և ասոնց մէջ գոնէ՛ դո-
նէ հարիւր, հարիւր յիսուն Պոլսեցի հայերու
նկարագրութիւնը կարգացած եմ իրենց Պոլ-
սէն մինչեւ Մարսէյ ճամբորդութեան:

Դժբաղդաբար սակայն, ամէնքն ալ իրա-
րու կը յաջորդեն և աւելի տարաբաղդաբար
ամէնքն ալ իրարու կը նմանին:

Կարծես թէ ամէն Մարսիլիացին հայ
ստիպուած, վճարուած ըլլար իր ճամբորդու-
թեան տպաւորութիւնները թերթի մը մէջ
քշելու:

Ուրկէ կը հետեւցնեմ թէ՛ ամէն աղգի
մարդիկ երբ կը ճամբորդեն, ընդհանրապէս
ծով կը բռնուին. իսկ հայերը, — Պոլսեցի
հայերը մանաւանդ, — գրականութենէ:

* * *

Շատ հին բան է, նոյն իսկ անցեալները թերթի մը մէջ հարիւր յիսուն և մէկերորդ անգամ ըլլալով Պոլսէն մինչեւ Մարսէյլ ճամբորդութեան նկարագրութիւն մը աչքիս կը զարնէ:

Օ՛, Աստուած, ազատէ զմեզ այս հիւանդութենէն, ի՛նչ կ'ըլլայ: Մինչեւ երբ, մինչեւ երբ ասանկ պիտի ըլլայ: Հարիւր տարի առաջ ալ երբ Մարսէյլ եօթնուկէս ամիսէն կ'երթային չեֆիւրմէյով, անոնք ճիշդ ասոր յար և նմանը յօդուածներ կը գրէին, հիմայ որ 22 միլիոն առնող արագընթաց շոգենաւներու շնորհիւ այդ ճամբորդութիւնը զբոսական պատյոյի մը երեւոյթն ունի՝ դարձեալ այդ յօդուածները, Oh! ça c'est dégoûtant ma parole d'honneur:

Եւ գիտէ՞ք ո՛ւր է դժբաղդութիւնը, յիշեալ յօդուածին տակ երկու գիր կայ Յ. Ա. (pardon! il y a fagot et fagot) որք կը մատնեն անունը մէկուն՝ որ առաջին անգամ չէ որ եւրոպայ կերթայ. ինչ որ ենթադրել կուտայ թէ՛ արդէն այդ յօդուածին պարունակութիւնը՝ խնամե՛ք սրբագրեալ և յաւելուածով ևն խացեալ, արտասպումն է այն յօդուածին որ — գրաւ կը դնեմ — առաջին անգամ Մարսէյլ երթալուն գրած ըլլալու է իրբեւ Պոլսեցի հայ: Աւելի տխուրը կայ: Հսկայ շոգենաւին մէջ եօթը հատ են եղեր, Աստուած մի արասցէ, եթէ ամէնքն ալ սկըսին իրենց սպաւորութիւնները գրել, ինչ որ անհաւանական չէ բնաւ, այն ատեն, ո՛հ, այն ատեն, առաջին անգամ ըլլալով մենք ալ պիտի ունենանք մեր գրական... bouillabesse:

* * *

Թերեւս «Հանրագիտակ» անանկ ընթերցողներ ունի՝ որոնք այդ թերթը ձեռքերին անգամ չեն առներ:

Ահա այդ կարգի ընթերցողներուն հաճելի ըլլալու համար է որ իրենց գաղափար մը տալ կուզեմ, կանխաւ այդ եօթը անձերէն մէկուն, — ո՛րը կուզէ նէ թող ըլլայ, — յառաջիկային գրելիք յօդուածին վրայ:

Սապէս պիտի գրեն, մէկի դէմ հարիւր գրաւ կը դնեմ:

ՊՈԼՍԷՆ-ՄԱՐՍԷՅԼ

«Յրէսինէի Լը Ֆարսէօր շոգենաւը Սայը Բաղարի առջեւ խորսիւած՝ ճամբորդներու կ'սպասէ: Իրարանցում մը կայ, շոգենաւին վրայ, քովը, տակը, առջեւը, ետին, վերը, վարը, հարիւրաւոր նաւակներ կը շրջապասեն զայն, որոնց մէջ զետեղուած են ճամբորդներ, ապրանքներ, թղթատարական սպառողներ, եւայլն, եւայլն:

Ժամը 4ին շոգենաւին վրայ ենք:

Շոգենաւը իր առաջին սուլիւնը կարձակէ:

Մայրեր են որ արդ կը գրկեն իրենց զաւակները, վերջին հրամուշտի ողջոյնին տալու համար անոնց, կիները կը փարին իրենց ամուսիններուն, եղբայրը եղբոր, նշանածը նշանածին, հօրարը եղբորորդւոյն, ճամբորդ վարժուհիները ... իրարու:

Մէրայ-Պուրնուշի առջեւ ենք, մէյ մըն ալ նայիս Գատը-գիւղի 5 թիւ շոգենաւը դիմացիս չեղա՛յ, ո՛վ Աստուած իմ, ընկմինք պիտոր, բայց չէ. բարեբաղդաբար մենք կ'անցնինք առջեւէն, Մաքրի-գիւղը կը գտնանք:

«Աւասիկ զանդաղութիւնը վարձատրուած» կը դռնէ մեր մէջէն վարժապետ մը:

Այլ եւս մեզմէ խոյս կուտան Վոսիորի գեղածիծաղ ասիները. և տրտմութիւն մը կը պատէ զմեզ:

Անգամ մ'ալ յետադարձ ակնարկ մը կը նետենք մեր ետին, և ի՛նչ տեսնաս. լուսածաճանչ արեւը Մաքրի-գիւղի ետեւէն կ'անհետանայ կոր:

Նաւապետը՝ բարի մարդ մը կ'երեւայ. կը ստիպէ մեզի կրկին անգամ ապուր առնել և հետաքրքիր բարեացակամութեամբ մեզ հետ կը խօսակցի: Ծովային մարդերու յատուկ բարութիւն մը կը նշմարես անոր աչքերուն մէջ, շրթներուն վրայ, թաւ յօնքերուն տակ: Սեղանին վրայ, Յոյներ, Գաղղիացիներ կան, Անգլիացի մը և մինք: Զուարթ ժամ մը կանցունենք բոլոր ճաշին ատենը:

Վեր կելկենք:

Այդ ժամուն ամէն ճամբորդ իր վրայ կ'անդրադառնայ, յիշատակներ կ'արթննան մտքերուն մէջ, սրտերը կը զեղուն:

Եւ ամէնքը կ'օրհնէին Երզնկ :

Գաղղիացիք իրենց Տեղ'Օմառ ժողովրդական երգը կ'երգէին և Յոյները Եարուսլի : Իսկ վարժուհիները «Ինչո՞ւ կուլաս դո՞ւ մանկիկ, — Խիստ ծեծ կերայ ես մայրիկ» : Շոգենաւին երկրորդ նաւապետը և բժիշկը վարժուհիներուն քղանցքէն մտաւ մը չին զոտաւոր :

Հետեւեալ առաւօտ վարդապետն արշալոյսին հետ Չանախ-Խալէյի առջեւ կ'արթննանք :

Շոգենաւը ըրաթիքան առնելու գործողութիւնը կը կատարէ և կը մեկնինք :

* * *

Երկար չընեմ, ասանկ խնդ ու խելառ բաներ մինչեւ վերջը : Մինչեւ որ Մարտիկա կը հասնին հոգինիս կը հանեն :

Գատը-գիւղը, Սան Սթէֆանօն լըմնալէն ետքը, կարգը կուգայ Տրովաթային իր Հոմերոսովը, Յունաստանի ծովափունքը իրենց Արամաղդով, Էւայն, Էւայն :

Հիմակ ալ Իսպանիան է որ մէջտեղ կ'ելայ : Սիկիլիա-Միկիլիա, Կարիբդէս-Մարիբդէս, Ռէճճիօ-Մէճճիօ, անխուսափելի Մուսինան, Սղրոմպոլի-Մսթրոմպոլի, Բորսիքա-Մորսիքա, et patati-et-patata և ոչչամբ կը հասնինք Մարսէյ :

Այ գործ չունիս նէ մտիկ ըրէ :

Ալֆօնս Տօտէն, Տիւման նանկ, հոս էլպան, հոն կղզիները, Բրօսքէր Մէրիմէն մէկ կողմէն, միւս կողմէ Շաթօպրիան, Աւսթէրլից, Վէրսալլ, Ապպէ Փարիս, Մօնթէ-Բրիսթօ, Բօյնիշ, Ժօլիէթ, Նօթր Ժամ սը լա Կառտ, Գաննըպիէր, Բրատօ, Ալէսը-Մէզան, տակաւին կ'ուղէ՞ք :

Ամէնքն ալ նորութիւններ, quoi !

Յանուն Աստուծոյ, յանուն ձեր ամէնէն սիրելիին, ահ քապիեթէն վազ անցէք :

Մենք ալ մեղք ենք, Տէ՛ր Աստուած :

Բասն ութ հազար անգամ ըսուած բաները նորէն կրկնելու մէջ ի՞նչ հաճոյք կայ, ինծի ալ ըսէք, կաղաչեմ :

Եթէ նոր բան ըսիւր զիւրին չէ, հին բաներ չըսելու ամենա զգուշութիւնն է :

Ի՞նչ մը խիղճ ունեցէք :

* * *

Բնական nostalgieն է, պիտի ըսէք, որ այդ խիղճները կը մղէ ատանկ խեղճ բաներ զրկու : Allons donc !

Են արագայ աօքթօր մը կը ճանչնամ, պզտիկ Բասգէօն մը un garçon chic, բարիւն մը որ բան կարելի է ըլլալ Պալսեցիի մը համար, մարդու չի հաւնող, անձնապաստան, v'lan քննադատ մը որ իր nostalgieն փարատեց բացագանչութիւնով մը որ Quartier Latinէն թռչելով սահեցաւ դէպի մեզ :

Այդ նշանաւոր բացագանչութիւնն է :

« Հա՛յ կիսի միսի, հա՛յ » :

Ամբողջ բանաստեղծութիւն մը կայ ասոր մէջ :

Սնոր պէս ըրէք :

Թ. ԱԼՓԻԱՐ

Զ Գ Տ Ա Յ . . .

— Իրամօթիսով ծախուած աղջիկ մը որ խուսուր չունենայ :

— Ֆեմինիսթ կից մը՝ որ երկանը գրխուն փորձանք եղած չըլլայ :

— Վարժապէս մը որ դրամական անգիւրիւն չունենայ :

— Հարս մը որ կետրօք համար ետիս քօրուած չըլլայ :

— Կեսուր մը որ հարսին համար « անփոսա՛լը » ըսած չըլլայ :

— Դրագիր մը որ գրածին հաւնած չըլլայ :

— Երեսասարդ մը որ հարուստ անէր պապա մը երազած չըլլայ :

— Կից մը որ սիրոյ յայտարարութեան մը ախորժած չըլլայ :

— Մայր մը որ աղջրկանը տարիք պահած չըլլայ :

— Կից մը որ իրմէ գեղեցիկ սպասուհիին համար երկանը հետ խըռ ըրած չըլլայ :

— Կից մը որ եկեղեցւոյ մէջ առ ու ան բամբասած չըլլայ :

— Մանկապարտիկապանուհի մը որ՝ (ամուրի սակայն) աման կարգուէի անգամ մը տէ սա՛ լաներուն ձեռքէն ազատի ըսած չըլլայ :

Հ. ՍԱՐԱՅԵԱՆ

ԿԸՏ ԿԸՏ ԿԸՏ ԿԸՏԱԿ...

կրտ կրտ կրտ կրտ կրտ կրտա՛կ ...

Միայն հաւերը չեն որ հաւկիթ կածեն, այլ շնորհալի օրիորդներ կան՝ որոնք դաշնակ կածեն, պիղ պըյըն միւսիւններ ... Զուլեակ կածեն, Անգլիոյ ամխահանքերուն չափ խորհախորհուրդ իմպատասէրներ ... Ի միտ կածեն ու զանեշտագիրն ալ յօդուած մը կաթէ ճիշդ օրին՝ Զատիկին հասցնելու համար:

J'ai l'honneur !

Հաւը կէս ժամ կը կտկտայ ու կածէ, օրիորդը ժամ մը կը կտկտայ ու հետոյ կածէ դաշնակը, միւսիւն՝ առանց կոտտալու կածէ իր instrumentը, ու ետ կը՛տ կը՛տ կը՛տ կրտա՛կ ... սպասեցէք որ ածեմ ... յօդուածըս, որ անշուշտ օմիք մը պիտի ըլլայ Զատիկ ... ցու յօդուած, համակ հաւկիթ, և հաւկիթաբանութեան վրայ տեսութիւններ:

Զատիկ ... ինչ անուշ անուն, որուն մօտ Սիրարիին, Նեկտարը ու Մառութիթը սաբառնայի պէս լեզի պիտի գար ու բռն թռեգայի չէվիրմէն ... սառը սապրո:

Բայց այս բառին անուշութիւնը մէյ մըն ալ ընտանիքի պետերուն հարցնենք, եթէ կարելի է անոնց զաղափարն ալ առնենք այս մասին, որոնք գիտեմ թէ պիտի պատասխանեն՝ « զըխրմ ... »:

Այս տարուան Զատիկը ինչպէս տեսաք շատ նազը *entrée* մը կընէ, Քրիստոնեայ աշխարհը շատ ուշ կողջունէ զինք, կերելի թէ սաստկաշունչ ձմրան պատճառաւ ուշ մնացած է պիտի ըսեն՝ սրամտութիւնը Կալեոչին գրուածքներէն սովորողներ, բայց ետ ուրիշ պատճառ մը կը տեսնեմ Զատիկին ուշանալուն մէջ, այն է՝ կնամոլութիւնը:

Հաւատացէք թէ պապա Զատիկն ալ կը սիրէ Եւայի ձագուկները, և անոնց հաճոյ ըլլալու համար, անոնց շիրին երեւնալու մըսօք ուշացուց իր գալուստը: Ինչո՞ւ:

Որովհետեւ եթէ կանուխ գար, այն ատեն չիք տիկիներ և օրիորդներ պիտի ստիպուէին *demie-saison* հազուստներ, գլխարկներ պատրաստել ... Ժամու համար, մինչ-

դեռ հիմա, փախնակ *demie-saison*ի, բուն *costume d'élégance*ով ընդ առաջ պիտի երթան և ասով մեծ էքօնօմի մը ըրած պիտի ըլլան, բայց ի շահ որո՞ւ ... անշուշտ խեղճ ամուսիններուն, որոնք ամուսնացած են ոչ թէ կին մը առնելով իրենց կեանքի ընկեր մը պատրաստելու մասօք, այլ *Au Sion*ի *Shpigeli* եւ *Paré*ի խանութներուն յաճախորդ աւելցնելու համար:

Բայց մեր ինչ փոյթը, երկար բարակ պրպտել անոր ասոր քսակը, միտքը և կացութիւնը, մենք կտկտանք մեր Զատիկուն հաւկիթը ածելու, որուն կսպասէք անշուշտ... ձեր պահքը աւերելու համար:

* * *

Անցեալ չարթու չեղաւ օր մը, յորում գէմ հանդիման չիդայի:

1. — Շոգեկնաներու մէջ առտուն՝ Եւլովայի սպասուհիի մը պէս և կամ վարժարանի մը 300նոց վարժուհիի մը տարազով՝ խլխլի տիկիներու և օրիորդներու, և երեկոյին կճըռ վրանին նոր գլխարկներով, նորերով, նորերով, որոնց համար յայտնի է թէ ճղացած են օրերով օրերով ...

2. — Ցերեկէն վերջ փողոցները, գլուխնին չալով ծածկուած և իրենց արտաքինով պօխչածի Բարիսը յիշեցնող աղատ ու ծըրծած ընտանիքներու, և երեկոյին պիւտենբու պէս ծըրծըր, ու սապոնահոտ մազերնին Փաշա-գիւղի կիներուն պէս մէջտեղէն ճեղքուած ու ճակատնուն փակած, (մաքուր մազերը, չեն վերցնէր իրենց տիրուհոյն հազիրը) բաղնեց ելածի ծեքծեքուն հովերով:

3. — Կարգ մ'ալ քիքիզ ու միմօտիս տանտիկիներ, որոնք անճոռնի աէքօլթէով մը կեցած տան սեմին վրայ, *skofjek*ով մը՝ զոր միայն ամուսինները կրնան վայելել, արինայով տախտակ չփողներ, չախչախ մաքրողներ, որոնց մօտ պաքալաքիներ ու եռմուրթածիներ կեցած չողիկ կը վազցնէին՝ « Եարատանայ գուրպան օլայըմ » ներ շոպ-

լելով, իրենց աչքերուն տեսածին ի պատիւ (ոչ ի նպաստ) :

Հիմա :

Աշխարհ հաւատք կորսած է կարծես, և էն սկեպտիկը կրօնամուլ մը: Եկեղեցւոյն դռները բոց են ժողովուրդին առջեւ, մանաւանդ կա՛նանց վրայ խօսելով, Տաճարները կը հոծեն կին հաւատացեալներու ահադին բաղժութեանէն, որոնք կոչնակին հրաւերին կերթան անձամբ պատասխանել :

Այս բոլորը հաւատքի սխալն, անանկ կարծելու չարի մշտմիտ պիտի ուզէք ըլլալ, աշո :

Տեսէք թէ Հանրագիտակ ինչ կըսէ այս կեղծ հաւատացեալներուն համար, ու պիտի համոզուիք :

Աւագ չաբաթը, որ ինքնին աղօթքի և քաղաքացիութեան չաբաթ մըն է, մեր տիկինները և օրորդները այդ չաբաթուն խոյի պահք կը բռնեն, սակայն և այնպէս բամբասանքին խոյին կընեն, հագուստին էն ծանրը և խոյին կը հագնին ու խոյինի պէս իրարու կտուէ թէեւ ժամ կերթան, սակայն փոխանակ մեղքերէ թոթափուելու, մեղքին մէջ կը թաթխուին և ուրիշներ ալ մեղքը կը խոթեն, իրենց այդ զազիր ընթացքին հետեւանօք, ի մէջ այլոց ... զիս, որ պատիւ պիտի ունենամ հոս վարը նկարագրելու զիրենք սա վերնագրին տակ :

ԺԱՄՈՒՆՈՐԱՐ

Հինգշաբթի առաւօտ, ամէն կին իր Զատկուան խրդմէքները աւարտած՝ հայելին դէմ արդուզարդովը կզբաղի, օրուան չորս ժամերուն իր ներկայութեամբը փայլելու համար :

Նոր գլխարկ, նոր հագուստ, նոր պօք, նոր հովանոց, նոր դուլպայ, նոր ... անշուշտ ներողամիտ կը գտնուիք աւելի խորերը չի նկարագրելու համար, վերջապէս նոր բառին անծայրածիր առումովը, բայց քսակէն: Կինները ասպաւորի օրերուն ամէնէն շատ կրօնասէրները կը հանդիսանան, իսկ զրամի տեսակէտով՝ ոչինչ, քանի որ հազար հարիւր կիններէն հազիւ զրոյշ իսկ կարելի չըլլար ժողուել, վրայ թաղ. Խորհուրդները, և գտնուած պնակի հասոյթներու ցուցակը :

Պլաշիկ օրինակ մը, բաւն չիւթին անցնելէ առաջ՝ որ պիտի ըլլայ լացի գիշերուան նկարագրութիւնը վերնատան մէջ :

Պատիժը կանայցի ցուցահանդէս մըն է կարծես, ահագին բաղժութիւն մը՝ հաղուստով նոր, տարիքով ... փթթածներու :

— Բարով հագնիս, որի՞ կարել տուիր, մոմերու պէս չիտակը, մոմերու պէս ... Կըսէ տիկին մը քովը կեցողին, որուն հետ ոչ ազգականութիւն ունի՝ ոչ մտերմութիւն, և ոչ իսկ ծանօթութիւն, սակայն կինները այսպէս կըլլան, քով քովի եկածնուն պէս՝ եղբարակա՛ւ ութեան պէս խօսքի հոսանքը կսկի :

— Շնորհակալ եմ, ամա սիրտովս չեղաւ, բէք անէ իր եկաւ, ախոր քի էրկանս ծառքէն կարողչէք մը վարցացի նէ: Կեղծ օրերն ալ վրայ հասան ...

Նոյն պահուն թաղ. Խորհուրդին երկու անդամները պնակ կը պտըտցնեն :

— Եկեղեցւոյ պայծառութեան պնակը ...

— Ամա չօք չէյ, կըսէ տիկինը շարունակելով իր խօսքը, քանի՞ կտրեց քի ...

— Մինակ կարողչէք ութը մէծիտի տուի, օսկիուկէս ալ վրայի խարճերուն դնաց ...

— Եկեղեցւոյ պայծառութեան պնակն է տիկինները, անտես մի առնէք ... պնակը քիչ մը կը կենայ մօտերնին :

— Էյ խումաշը քանի՞ առիք ... ափ կընես հարցունելու ...

— Մէթոսն էստունը օխարչ սա ուր է էճէլ պէշիլով վերի իտաթը կեղուի խանութ մը կայ նէ ...

— Բարով վայլես, աղէկ օրերու ...

Ուրիշ պնակ մը կուգայ :

— Տնանկ ազքատոնց՝ պնակը անտես մի առնէք ...

— Շարխաթ խըյախ կացեր է երեւիդ, քանի՞ կտրել տուիր ...

— Սուս եղիր, ինծի կուգայ քի, չարխայէս խարուեցայ ... թամամ անտուերիու մէծիտի եմ տուեր ...

— Հի՛ ... խըյանէթ, շատ փարայ ...

— Ամա՛ն հոգս, էրիւս կըսէ կոր քի սիւսիլ մի խնայէր տէյի, ան քիչ մը մէռաքը է, կուզէ քի շարխան զրոյշ առնես չառիսի պէս սուռաթս դուրս ֆըրդանմիշ ըլլալ ...

— Էյ հա, պաղիսին կուզէ քի կնիկը սիւսլիւ երեւայ տէյի ...

— Տաղաւարի պնակն է, տիկիններ, անտես մի առնէք ...

— Էօֆ ... աս թապախներն ալ խաթար են կապեր գիտես քի, սօնը չիգար կոր, երկու չիֆթ խորաթա՞ պիտի ընես, ի՞նչ պիտի ընես, առիկի բոուած պանը չիգայ ...

— Հախ ունիս քուրուկ, նայէ կլոխս խնլք ձգեցին քի ... ի՞նչ կըսէի կոր ... երկու աչուընիդ քէօնայ քի զի՛նա տաղըդ միշ ըրիք ... հա՛, իմ էրիկս թէրսինէ, հիշ չուզիր քի սիւս մը ընեմ, խըսխանձ է խըսխանձ ...

— Էյ աս քաշուելիք բան չէ, նայէ իմինս քիչ մը ծառքը ծանր է ամա խուզիլի պէս Ջատկուան վրայ գլոխս շնեց շտկեց, փառք Աստուծոյ ...

Անաթօթներ ... Աստուծոյ Տաճարին մէջ իր անուշով ալ փառք կուտաք ձեր ամուսնոյն շնորհիւ զձեզ քուռչի կտորներով կուկած ըլլալուն համար փոխան կարմրուկ ոսկիներու, ու ընաւ չէք քաշուիր, չէք խըսխանիր անտարբեր մնալու երբ եկեղեցւոյ պաշտօնեայներ ձեր մօտէն կանցնին, ի խնդիր ձեր պարզ մէկ տաանոցին կամ քառասունոցին, յիշելով եկեղեցին, աղքատները, եւլն. երանի թէ Եկյքան պեզի հաղուստով ու քէչէ գլխարկով հրամմէք Աստուծոյ տունը, ու փոխանակ Բերայի խանութպանները հարըստացնելու՝ ձեր սին ու պատիր ֆանթէզիներով, հինգ զրուշի մանտրուք առնէք ձեր ամուսիններէն և օգնէք այն Տանը՝ որուն Տիրոջը աղօթելու պատրուակով կուգաք կը խոնուիք քոթիթէ ընելու իրարու քուալիք ... նալէ՛թ ... :

Այսչափով չպիտի աւարտեմ յօդուածս, դեռ ունիմ ըսելիքներ կիններու մասին, մանաւանդ հինգշաբթի գիշերուան ժամերգութեան, որ Աւագ շաբաթուան է՛ն սրտայոյզ աղօթքները կը կրկնուին, որոնց ի լուր էն սկեպտիկն անգամ յարտասուս կը փշձիկ:

* * *

Գիշերուան թանձր ստուերները եկած ծածկած են չորս դին: Եկեղեցւոյն զանգակը իր տխուր գանգիւնով հրաւէր կը կարդայ Ժողովուրդին, գալ աղօթել Գրիստոսի հետ առ

Աստուած: Աստուածորդւոյն վերջին գիշերն է, Գեթսեմանիի աղօթքին գիշերը:

Կարծեմ երկու բառով բացատրեցի թէ՛ ինչ լուրջ ու ահաւոր խորհուրդ մ'է որ կը կատարուի լացի գիշերին, և որ աստիճան լրջութիւն. լուրթիւն և կարգ կանոն կը պահանջէ խորհուրդը այդ գիշերին:

Ճըվըռ ճըվըռ ճըվըռ, վերնատունը լեցուած են կինները, շատեր սոնալուայէն ի վեր տեղ բռնած՝ կծկուած են հող, տունէն չըխըն չըխըն ուտելիքներն քովերնին, իբր թէ տուն տեղ եղած՝ կը շաղկորատեն կը խօսին անանկ նիւթերու վրայ՝ զորս հոս կրկնելը կենցաղագիտութեան գէ՛մ պիտի ըլլար:

Տակաւ ժողովուրդը կը խոնուի, մութը կը կոխէ, սեղանին վրայ շարուած տասերկու մոմերը միայն ընդ աղօտ կը լուսաւորեն Տաճարը, և ահա առաջին Աւետարանը կսկսի:

Ձգենք որ Աւետարանը կարգացուի վարը, և մինք քիչ մը վեր ելլանք կիններու խօսակցութիւնը լսելու համար:

— Երկու աշկը քէօնայ, ան չէ՞ր սէպէպը քի էրիկս ինէ պուզ կորեցաւ տէ մէջերնիս խըրը պակաս չէ հիմա ...

— Աղէկ ամա քուրուկ, ասանկ իրիկունով մեղքը մ'առնէր, նայինք իրա՛ւ է ...

— Դա նասը իրաւ, որ մը ես չէի՞ քի պաղնիք կերթամ կոր ըսելով դուրս ելայ տէ, եաքէն սօխախը դառցայ կէս սահաթէն եկայ տէ, շան ձգնածը էրկանս կիրկը եախալամիշ ըրի նէ ... սո՛ւս սո՛ւս, պերանս բանալ մի տար ասանկ իրիկունով ...

— Էյ հախ ունիս ... ի՞նչ ըսեմ քուրուկ, Աստուած պէլան տայ անանկ է նէ ... սուս նայիմ սա Աւետարանը մտիկ ընեմ ...

— Ճանըմ իս մտիկ ըրէ հիմա, Աւետարանը ամէն իժիր կը լսես, տահան կայ ... , անցած օր չորս օխա խուզիլի միս առեր է տէ բօստալին տունը խաւեր է թաղէ սալաթայով, իրիկունն ալ ինք կոցեր մէկտեղ բաթլամիշ են եղէր ... ես իսէ, պէքէյէյի պէքէյէյի, նէտէն սօլբայ քէօթ քիւթիւկ ելաւ եկաւ տէ հիշ երես չեկայ ... : Հիմա՝ ճուկ մախսուս հոս եմ եկէր քի, վախիթս ասնի տէ ելլամ աղւն պիտի երթամ քի, պէլքի շան սուռաթը կէնէ եկէր առէր նըստեր է տէյի ...

— Աստուած աչողէ, ի՞նչ ըսեմ քուրուկ,
քաշուկիք տէրտ չէ ...

— Քա չէ՛ ... բաղդ ալ չունիմ, քիչ մը
կէօթէրիչս տեղը ըլլա՞ր նէ ես ալ բլաքօն
մը կը պանայի ամա, քէօնայ աչկը, երեսս
նայուելիք չեմ եօխսա ...

Երկրորդ Աւետարանը կսկսի:

Ուրիշ պատկեր մը մութին մէջ գծուած:

— Ուաքդ պագնեմ կէնճ, ալթըխ կաթե-
րըս չի մնաց, սա մախսըմը որ սահաթ է պօ-
շը կը ծծէ կոր, կտորճիկ մը կաթ տայիր, Ը-
սելով պղտիկ տղայ մը գրկած մայր մը ու-
րիշ ծիծմոր մը քով կեթթայ ...

— Աղէկ ամա չօճուխիս խըսմէթը նասըլ
հանեմ տէ քուկիսիդ տամ ... կիւնահ չէ՛ ...

— Քա ի՞նչ կըլլայ, վաղը էրիկս հինտիս-
թան ճէվիզի պիտի պերէ, ուտեմ տէ կաթե-
րըս կիւռիւ կիւռիւ կա՞յ նէ ես ալ քուկի-
նիդ կը հաննիմ, հիմա տամլա մը չունիմ,
առտուանց պէրի ծըք ծըք կը քաշէ կոր ...

— Էյ ֆարազա մէկ առա մը տուն եր-
թայիր տէ կտոր մը պան ուտելիր ...

— Իշտէ տեղս խաբարբմիշ չընեմ տէյի
առտուանց պէրի եկայ հոս փակայ ...

— Տէր ողորմեսայ, չըլլար ճանըմ, կըսէ
ուրիշ տիկին մը խօսքի մէջ մանկելով, իրա-
րու արուն կանցնի, հէմ ալ կըսեն քի, երկու
մօրմէ կաթ ծծող չօճուխը եալապուխ կըլլայ
տէյի ...

— Իրիններ կոր՛ հէմէն, թառախներ բս-
խէ բիճդ ... քի առանկ նեղ սահաթի չես
համիր կոր, եկու ծօ՛ Լեւոնիկ, կնայ սը-
տեղէն տասը փարայի ֆուսնճուա առ տէ,
ծամեմ ծամեմ պերանը դընեմ չօճուխին, կը-
սէ մանչ զաւակը մօտը կանդելով, որ 6-7
տարեկան կայ ...

— Մութ է մայրիկ, կը վախնամ ...

— Ծօ՛, հայրիկդ գնայ կտիր, ես Եօռ-
կիին է եա Քօչօյին կաղինօն, անոր ըսէ քի
մայրիկիս կաթերը փախան, չօճուխը ճանկ
ճանկ կուգայ կոր, ֆուսնճուա կուղէ կոր
տէյի ...

Վարէն կը ձայնէն,

— Սո՛ւս ... սա չօճուխը սուս ըրէք
ճանըմ ... գիրքը չենք լսեր կոր ...

Վերէն ճատալող կնիկը գլուխը դէպի
վար երկարելով,

— Ձեր պերնին ըռախիի հոտէն ալ մեր
քիթը կիյնայ կոր, պիւրիւմ պիւրիւմ վեր
կուգայ կոր ...

Ուրիշ պատկեր մը:

— Քա ճանըմ կտորճիկ մըն ալ սուս ե-
ղէ՛ք տէ Գիրք մտիկ ընենք, որ սահաթ է
կըռ կըռ կըռ մաքինա ըլլար նէ կեցած
էր տիօր որ հիմա ...

— Սա շամալըն չախմիշ ըրէ նայիմ ո՞վ է
ատ ճատըն ... կըսէ անկիւնէն կին մը, որ
առաւօտէն ի վեր խօսելէն բերնին երկու
կողմի փրփուրները քարացած ճեփ ճերմակ
փրէն կտրած էին ...

— Ես եմ ես, կուգես շամալը վառէ կու-
գես նէ տունէն ֆանօսը լամպա մը պեր,
ասոր աստեղը ժամ է ժամ ... կտոր մը լե-
զունիդ ներս քաշեցէք տէ Աստծոյ աղօթ-
քին ինկէք ...

— Որ սահաթ է հարսիդ միսը սախըզ
էիր ըրեր նէ մնք ծան հանեցի՞նք քի հիմա-
ճուկ ինքիդինքդ Աստուածա կլեցուցեմ կու-
գես կոր ... հէ՛ ... էրիկդ ըրիր չըրիր սեւ
խողին տուիր տէ հիմա ալ պախասիներուն
քիւրէկ սալամիշ ընել կուգես կոր նէ, եաղ-
մա չիգայ, քուկին ֆօթողդ թէրս կը դառ-
ցունեմ հա, ինծի օլտուխճա ըռէիդ Պայծառ
կըսեն ...

— Երկու աչքդ քէօնա տէ աչխարհըը
մութ տեսնաս հէմէն, քէօմիւրճիւ խայասի
մը պուէքիմ ...

— Քա ասդին եկուր նայիմ, ո՞րի ես
քա՞ ... ըսելով մինչ կը պատրաստուի կա-
տուի պէս իր հակառակորդին վրայ ցատկել,
մօտը նստող կին մը,

— Վուշ շան սառնակ ելլաք... փո՛րս...

աման փո՛րս ...

— Քա ի՞նչ եղաւ, վախնամ ծոսուոր էր
կէնճը ... կըսէ ուրիշ կին մը ...

— Քա վուշ ցաւերը պոնեց վախնամ ...

— Քա չըփեցէ՛ք ...

— Քա քօքօլօնը ...

— Ժամկոչ աղբար ...

— Ամա՛ն ...

— Քա աման կուղէ կոր ... գործը մեծ

ցաւ ...

Եւ իրարանցում մըն է կը փրթի վերնա

տան մէջ, ու քիչ վերջը կրկին հանդարտութիւնը կը տիրէ:

Աւետարանները կը շարունակուին, և յաւարտ տասներկու գիրքերուն, քարոզիչը բէմ ելլալով՝ կսկսի քարոզին:

Ամէն կողմ լուռ անձայն կ'ունենդրեն քարոզչին մեղմ ու ազդեցիկ խօսքերուն, օրուան սուգին վրայօք:

Տեղ մը քնչալէս կըլլայ, քարոզիչը Քրիստոսի խաչելութեան վրայօք խօսած ժամանակ, Աստուածամօր անունը տալով կը գոչէ՝

— Մարիամ ... Մարիամ ...

Վերնատունէն ձայն մը ... համմէ ... քա աղաս կը կանչէ կոր նէ ինչո՞ւ ծան չէք ի տար կոր, քունս տարեր է ...

Սպասուէի մը՝ որ հոգ էր այդ գիշերին, կարծելով թէ գինքը կը կանչեն՝ քունին մէջէն կը պոռայ համմէ ...

Երկու խօսքով ըսենք թէ՝ էրկամարդիկ աւելի լուրջ են Եկեղեցւոյ մէջ քան թէ կիները:

Շիտակ է՝ արդեօք ...

ԼԻԼԱ

ՀԱՄՈՎ ՀՈՏՈՎ Է.

ՉՈՒՏՈՂԸ Ո՞Վ Է...

Չատիկը կուգայ կոր, ինչ կը խորհինք, մէյ մը հազուադէպ, մէյ մ'ալ կարծիր հաւնիլի՞ք: Բայց ասոնց չափ կարեւոր և ասոնց չափ յորդի՝ ՉԱՏԿՈՒՄԱՆ ՉԷՕՐԷԿԸ կայ ասդին:

... Չէօրէկը, ինչ ալ ազգոր կ'ուտուի, եթէ լաւ պատրաստուած է, եթէ եղբ ալիւրը և եփուածքը մաքուր, ալիւր և վարդափ ձեռքով եղած ըլլան:

Այդ վարդափթիւնը անա պէտք է փնտռել համբաւաւոր անուշափածառ Մանուկ աղա էթմէքճեանի քով, որ, ինչպէս ամէն տարիներ, նոյնպէս այս տարի՝ Ս. Չատիկի առթիւ պատրաստած է հիմնադր համով և հիանալի հոտով պատուակած թարմ չէօրէքներ, իր պատուարժան յաճախորդներուն համար:

ՀԱՍՏԷ. — Գուռ-գարու, կայսրանին գիմար:

ՅՈՒՍԱԽԱԲՈՒԹԻՒՆՍ

Հարսնութեան անցացողներուն

— Լօթթառիւ ... Լօթթառիւ ... Լօթթառիւ ... պուեուն չէքիւեօր, գաւանան ալթը եուզ պին ֆրանք ալիօր ...

Ահա այս յանկերգն է որ ականջիս կուգայ ամէն անգամ որ Քարաքէօյէն կամ Պաղչէ-գարունէն կ'անցնիմ ամէն երկու ամիսը մէյ մը:

Թէեւ բաղդ ըսուած բանէն իմ քովս բընաւ չգտնուելուն քաջ տեղեակ՝ սակայն բարեկամի մը դրդումներուն վրայ, անցեալները բոսդես մը գնացի կամ տուելի ճիշդը գնել գտնուեցայ այն յոյսով թէ՝ կարելի է գէթ այս անգամ բաղդը կը ժպտի ինձ, ինչպէս ուրիշներուն:

Ու ալ սկսայ ինչ երազներ հիւսել, ինչեր մտածել, ինչեր պիտի ընէի եթէ բաղդը ժպտելով ինձի 600,000 ֆր. ձեռքս հասնէր:

Նախ՝ նպարավաճառիս, հացագործիս, կոշկակարիս, դերձակիս, զարգավաքնիիս, մսավաճառիս, կաթնավաճառիս, փերեղակիս ունեցած պարտքերս վճարել:

Երկրորդ՝ սիրուհիս ինչ որ ուզէր «չէ՛» չպիտի ընէի, անոր սուլու մէկ պաշիկին տրամոնտալու համար:

Երրորդ՝ քանի հատ որ հայերէն թերթ ունինք Թուրքիոյ մէջ, պիտի բաժանորդագրուէի, բացառութիւն Իզմիրինը, որուն ուղղութեանը երբեք չեմ հաւանած: Այսու հանգիստ չեմ ըսեր թէ չեմ կարգար. կը կարգամ, բայց այն թիւը միայն՝ որուն մէջ Յ. Ալփիսար ստորագրութիւնը կը տեսնամ:

Չորրորդ՝ մինչեւ հիմա հրատարակուած ու հրատարակուելիք գիրքերը պիտի գնէի, անոնց մէջէն բանագողութիւններ ընելու համար:

Հինգերորդ՝ 60 ոսկի պիտի տրամադրէի մեր գրադէպներուն, իրենց վիճաբանութեան նիւթ մը եւս աւելով, ու ով որ յալթական հանդիսանար, անորը պիտի ըլլար 60 ոսկին:

Վեցերորդ՝ շատ մը տուններ ու արարթըման մը պիտի չինէի:

Յօթերորդ՝ հինգ վեց տեսակ հագուստ

պիտի չլինէի մէկանց, որ ընդ մէջ մէյ մէկ հաստ հաղնիկու համար:

Ութերորդ՝ ինչ որ ամէնէն կարեւորն է ինձ համար — պիտի ամուսնանայի սիրած աղջկանս հետ, որուն անունը Սիւսնի է:

Իններորդ՝ թէեւ սաան և ինը տարու հազիւ կամ, սակայն հիմակունէ մասնաւոր դամբարան մը չլինել պիտի տայի Շիշլիի դերեղմանատան ամէնէն շքեղ մէկ վայրը:

Տասներորդ՝ մեր սունին համար պէտք ըլլալիք տասը տարուան սոխը, սխտորը, բաթաթէսը եւն. պիտի գնէի:

Տասն և մէկերորդ՝ մեր անգուգական վ. Փափազեանին պէս, ես ալ անձնական կառք մը պիտի առնէի:

Տասներկուերորդ՝ երեք հատ մեքուս պիտի սեփականէի, որոնց ընտրութիւնը ինձ կը վերապահեմ:

Եւ տակաւին ինչե՛ր ու ինչե՛ր եւս:

Ինչպէս տեսաք, ինձ համար ամէնէն կարեւորը ութերորդն է, այսինքն ամուսնանալ սիրուհիս հետ, անոր տոոր արջը մտիկ չընելու համար:

Վերջապէս օրն էր ուրբաթ և էր նաև ամառադուլ: Գրասենեակէս վերադարձիս Բարաքէօյի մէջ կը հանդիպիմ խըլլոտ լալոսներու, որոնք իրենց ձեռքը արծակ մը թուղթեր բռնած «նիւմէնօ Բասթօ, գաղանթն նիւմէրօյ» կը պօռային: Բոան հատ փարայ ցնծալով կը գնեմ ատոնցմէ հաստ մը, նայելու համար թէ՛ արդեօք չա՛հած եմ:

Մօտերը գտնուող Զոսկօյի գարեջրատունը կը մտնեմ, ուշի ուշով զննելու համար թէ բազըր ժպտած է ինձի և եթէ, ո՛չ, գէթ նաքօ մըն ալ չպիտի դիջանի ընել:

Ու ահա բուսէս և նիւմէրօի թուղթը քովէ քով են: Մէկ միլիոն, հինգ հարիւր քսանը մէկ հաղար, չորս հարիւր վաթսուն երեք, երեք, երեք, վաթսուն երեք ...:

Յուստիսաբ չէի եղած, իրօք վեց հարիւր հազար ֆրանք չա՛հած էի, որով ըսել է թէ՛ կարող էի ընել ինչ որ մտադրած էի:

Ուստի դրամը գանձելէս վերջ՝ նախ գլխասներու, կօշիկներս չինել տուի, երկու օր վերջը Պէօյիւք-տէրէ ապարանք մը վարձեցինք մօրս հետ, Շիշլի ծախու արարթը մօն մը կար, ան ալ գնեցինք, Թարա-պաշի

Սօֆի փողոց տունը մը եւս կար ծախու, ան ալ գնեցինք, մէկ քանի հաս ալ Բանկալթիի մէջ կար, անոնք ալ մերը եղան:

Հիմա մնաց ամէնէն կարեւորը եղող՝ սիրուհիս հետ ամուսնութիւնս:

Տասը օրուան մէջ խօսք-կապ, նշանտուք եւն. կատարուած էր ու որոշուած նաեւ երկու ամիս յետոյ պսակնիս:

Փեսայութեանս օրը հաղած քօստիւմս և ոչ մէկը հագած էր մինչեւ հիմա կրնամ ըսել: Սեր-սիւ բրտէնկօթ մը, նոյն դոյնով ժիլէ մը և տաբատ մը կըծըռ կըծըռ: Լուստսին պօթեր՝ որոնց քով հայելին ոչինչ կ'արժէր, անխուսափելին՝ ճերմակ փողկապ մը ու ձեռնոցներ: Ահա այս վիճակին մէջն էր ուր եկեղեցիէն ներս մտայ ներկաներու ուշադրութիւնը կեդրոնացնելով իմ վրաս:

— Իշթէ քա, փեսան կուգայ կոր:

— Ծօ պճւ տըր կիււլէյի, ալթը այ էվ վէլ նէ իտի, չիմտի նէ օլտու, հէյ կիտի բաղդ, հէյ:

Եկեղեցիէն ներս մտնելուս կը տեսնեմ ապագայ կինս, արդէն շատոնցէ և վեր եկեր բազմեր է, հետը բերելով իր սօլը սօքը:

Բահաններէն մին որ կ'երևի թէ այդ օրը ուրիշ տեղ ալ հարսնիք ունէր, ինձի մօտեցալով՝ «փեսայ էֆէնտի սկսինք» կը ձայնէ կոշտաբար:

— Կեցի նայինք, տէր սրտոս, տակաւին գալիք հինրեր կան, ասկէ զոտ կնքահայրն ալ չէ եկած դեռ:

Ու կէս ժամ, մէկ ժամ, մէկուկէս ժամ, երկու ժամ և դեռ մէջանդը կնքահայր չկայ:

Ինչ եղաւ արդեօք, ինչ պատահեցաւ, ինչո՞ւ չեկաւ, զղջացած էր կնքահայր ըլլալուն:

Ու ճիշդ նոյն պահուն ուր ինք՝ այսինքն կնքահայրս եկեղեցիէն ներս կը մտնէր, աչքերս կը բանամ ու կը տեսնեմ որ անկողինիս մէջն եմ ...:

Այս ան յուսախաբութիւն մը չէ՞, ըսէք (*):

Երես

ՍԵՊՈՒՆ Մ. ԱԿՈՒՆԻ

(*) Բաղդադի տղայ ... արթննալուդ ինքզինքդ անկողինիդ մէջ եւ դուրս և ոչ թէ Հիւանդանոցին յիմարաբաժնին մէջ:

(Մ. Ա.)

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ԳԱՏԸ-ԳԻՒՂ. — Մինչև հիմա աղ-
ջիկ առնել տալու խնդիրներու վրայօք
երկու կողմի վրիժառու թիւններու շատ
մը ձեւերը լած էինք, բայց կարդա-
ցէք հետեւեալը: Նախապէս աղջկան
մը ձեռքը խնդրելով, ծնողացը կող-
մէն մերժուող երիտասարդը, ժամա-
նակին ընթացքին մէջ ամուսնանալով,
բաղդը այնպէս կը բերէ որ, թէ աղ-
ջիկան և թէ տղուն որոնք զատ զատ
ամուսնացած էին՝ քով քովի իյնան,
ոչ թէ քատուիլի մէջ՝ այլ տուններու
պատճառաւ, մանչուն հաւերը քովի
պարտէզը յաճախելուն հետեւանօք,
անցեալ օր ինչպէս կըլլայ, հակառակ
պատին վրայ գրուած արգելքին, երի-
տասարդը երբ քովի պարտէզը կը ցատ-
կէ՝ իր հաւերը առնելու համար, զը-
րացի ախօր, ծայր աստիճան բարկու-
թեան մէջ՝ հաւերուն հետ միասին
միւսիւին սրունգէն բռնելով պատէն
անդին կը նետէ: Բա՛յց . . . որովհե-
տեւ տղան լաւ ժիւնասքի՛ գիտէր, ճար-
պիկ sot aerienով մը ինքզինքը ոտքի
վրայ կը գտնայ . . . :

ԵՆՆԻ-ԳԱՐՈՒ. — Տեղւոյս նորա-
կաղմ Դպրաց դասը, զանձանակի շրը-
ջագայութեան համար թաղ. Խորհրդոյ
հետ տեղի ունեցած ըսի-ըսուի մը հե-
տեւանօք՝ կ'իմանանք թէ նորադարգ-
ոնեկին կահ կարասին ինչպէս նաեւ
սրօնները և վարագոյրները վիզիտէր
են: (Բաշավաւաճի Մուշօն մը պիտի
զրկուի զանոնք գնելու համար. Ծ.Խ.):

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ. — Հանրածանօթ
դրօսարանատէր Միհրան էֆէնտի՛

Պէյէրին պարտեզին բացուող ձիւնի Շեմ-
պօ անուն Չինական թերթէն առնե-
լով մենք ալ մեր ընթերցողաց կիմաց-
նենք:

ՍԿԻՏԱՐ. — Հինգշաբթի օրուան
Ոսնալուային, ժամասէր տիկին մը տի-
րող բազմութենէն նեղուելով քօնսօլին
բանակին ժամկոչին տալով, օտոյտնե-
րել տուէր է . . . չի մարելու համար:

ԲԵՐԱ. — Լացի գիշերին եկեղեցիէն
դարձող կարգ մը ընտանիքներ, շուն-
ջերին Սթանսթի առեր ու հոն փառա-
ւոր սուբէ մը ըրեր են պիւռայով, ժամ-
պօնով, բաթայով, հոգւոյն իրենց
հանգուցելոյ . . . :

ՍԱՄԱԹԻԱ. — Շաբաթէ մը ի վեր
ձեռքը բերին հասնող տեղացի ըն-
տանիքի հայեր, Լէնի-մահալէ եր-
թալով օգուէտ ամառանոցներ կը
փնտռեն, ԱԺԱՆ, ՀԱՎԱՏԱՐ և ԵՐԵ-
ԽԱԼԻԲ. Վերջը չըլլաք գոտալիք. Ծ.Խ.):

ՅԱՆՈՒՆ ՊԵՐՊԵՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ փափաքելով իր խոնարհ
նպատք հասցնել Մեծանուն Վարժարանին,
այս անգամ կը փութանք ծանուցանել Արգոյ
ընթերցողաց քե՛. ՏԱՍԸ օրինակ տարեկան
քերք տրամադրած ենք գաւառային աղփաթիկ
վարժարաններու, որոնց փոխարժէքը եղող
կէս կէս ոսկիէն գոյացած հինգ ոսկին ով որ
մեզ դիմել բարեհաճի, պիտի յանձնենք Ս.
Պատրիարք Հայրիկին:

Արտօնատէր ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԿՐ. Ե. ԱՍՏՏՈՒՐԵԱՆ

Պապր-Ալի հասէսի քիւ 52.

ՄԵԾ Վ ԱՃԱՌԱՏՈՒՆ

ԱՐԱՆԳ, ԿԱՆԱՆԳ ԵՎ ՏՊԱՅՈՑ


ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ ԵՎ ԸՆԿ.

Գ. Պոլիս, Սուրբան Համալ, Թոփալեան խան
Սոյն վաճառատունը, որ տարիներէ
ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց
տոկոսներով եւ գիներու անմրցելի
աժանութեամբը շահած է բոլոր իրեն
գիմող յաճախորդաց վստահութիւնը,
այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր
հագուստներու, կանանց բեղուններու
եւ տղայոց շիք եւ գիմացկուն փոքրիկ
ներու ճոխ մթերք մը պատրաստ ունի,
որ շերմապէս կը յանձնարարուի ամէն
անոնց, որոնք պէտք ունին ներկայ
եղանակին հագուստի եւ ուրիշ նմանո-
րինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զրչ. է:

Գաւառներէն յանձնարարութիւնը
փութով կը կատարուին: 50—32



ԱՌԻԹԷՆ

ՕԳՏՈՒԵՑԷՔ

ՓՈՒԹԱՑԷՔ ԳՆԵԼ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ

Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆԻ

Ճեղք պէյ խանին
սակ

Թէյի մեծ վաճառատան թէյերը,
որք ուղղակի ներածուելով Սեդանէ,
Չինաստանէ, Հնդկաստանէ, Ճապոնէ եւ Ճա-
րոնէ:

Ամենէն գոյաւարահաճներն իսկ կըր-
նան գոհանալ թէյերու թարմութեամբ
հոտովն ու համովը:

Փնտռեցէք մանաւանդ իրենց յա-
տուկ խառնուրդները, որք կը ծախ-
ուին մեծ եւ փոքր քանակութեամբ:

Ուշադրութիւն մտաւորին:

Ա Պ Ա Ռ Ի Կ

6 ԱՄԻՍ ՊԱՅՄԱՆԱԺԱՄԷՆ ՅԵՏՈՅ ԱՆՊԱՅՄԱՆ ԱՊԱՌԻԿ
5000Է ԱԻԵԼԻ ՏԵՍԱԿ ԻՐԵՂԵՆՔ 5000

Տեղական և Բարիգի 14 և 18 աստիճան ոսկւոյ վրայ բազմատեսակ գոհարեղէններ, օղ, մատնի, ասեղ, ևայլն. նաև անուններու սկզբնատառով գոհարազարդ մատանիներ, ոսկի, արծաթ ժամացոյցներ և նորաձեւ չղթայներ, ասոնցմէ զատ ամէն եղանակի յատուկ պատրաստ և չափու վրայ դգեստներ, կօշիկներ ու գլխարկներ, արանց, կանանց և տղայոց համար: Նաեւ մուշամպա վերարկուներ, բուրդէ և մետաքսէ չրջադգեստի կերպաններ, պատրաստ ճերմակեղէններ նաեւ խասա, ամերիգան, պասմա, եւայլն. և զարդի վերաբերեալ պիտոյք, մեքենաներ՝ լուացքի, լուսանկարի, կրամօֆօն, ինչպէս նաեւ կարի (ձօնս. Նովման) ևայլն:

Ունինք նաև եւրոպական նուրբ ճաշակով պատրաստուած կահ կարասիք, հիւրանոցի, ննջասենեակի, ճաշարանի և խոհանոցի վերաբերեալ ամէն իրեղէնք, ամէն տեսակ վառարաններ, նաև բաղնիքի, խոհանոցի եւրոպական շարժուն օճախ և լն.:

Վաճառատունս իր տեսակին մէջ միակն է որ չահած է հանրութեան վստահութիւնը, գնահատուած է նաև իր ապրանաջ տոկունութիւնը, նրբութիւնը և աժաւ նութիւնը:

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղչ

Շարաթական և ամսական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են:

Հաճեցէք դիմել ՀԵՐՃԱՅԻ Վաճառատուն

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐԶՈՑ ՄԵԾ ՓՈՂՈՑ ԹԻԻ 13

50—21